ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԴՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ՝*),
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (*ՍՏԱՄԲՈՒԼ*),
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (*ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ*),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (*ԴԱՄԱՍԿՈՍ*),
ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻԻՆ (*ԼՈՆԴՈՆ*),
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (*ԱԹԵՆՔ*),
ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (*ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ*),
ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ԻՆ (*ՔՈՏՏԱՅԱՄ*),
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*),
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (*ՎԵՆԵՏԻԿ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*),
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՎԻԼՅԱՄ
ՎԻՍՍԵՐՏ ԴԸ ՀՈՒՖՏԻՆ (*ԺԸՆԵՎ*):

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Հրաշափառ հարությամբ լույսը վերստին կշողա աշխարհի հորիզոններուն վրա և մեր սրտերեն ներս: Եվ մեր հոգիները նորեն կլեցվին խաղցր ուրախություններով: Զի կնավատանք մենք, թե դատարկ է գերեզմանը խաչյալ Քրիստոսին և ազատ է հույսին ճանապարհը դեպի հավիտենական կյանք:

Այս ուրախությամբ կշնորհավորենք Ձեր Սուրբ Ջատիկը, մաղթելով Ձեզ կյանքի խաղաղ ու արևշատ տարիներ բեղմնավոր գործունեությամբ՝ ի հոգևոր շինության մեր ժողովուրդին:

Թող զորանան և ծաղկին մեր եկեղեցիները Աստուծո հովանիին ներքև:

Ձեզ սիրող Եղբայր ի Քրիստոս և Ձեզ աղոթակից՝

ՎԱԶԳԵՆ Ա

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձերդ Սրբություն.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՜Ի Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Նշանակալից է քրիստոնեական այն բարի սովորությունը, երբ, Քրիստոսի հրաշափառ հարության տոնի առթիվ, եկեղեցու հովիվները շնորհավորում են միմյանց, ողջույն և բարեմաղթություն փոխանակում Նրա անունով և աղոթում միասին:

Եկեղեցու միության հաղթանակը արտահայտությունն է մեր երկինք համբարձած Մեծ Հովվապետի պատգամի: Այսպիսով, հարության տոնի ուրախ առիթով, մեր աղոթքը բարձրանում է առ Աստված և փոխադարձ սերը մեզ կապում է միմյանց:

Ողջունելով Ձերդ Սրբությանը մեր Փրկչի լուսապայծառ հարության տոնի առթիվ, մաղթում եմ Ձեզ երկարատև կյանք և հովվապետություն՝ ի փառս Ս. եկեղեցու:

Եղբայրական սիրով և հարգանքներով՝ մնամ

ԱԼԵՔՍԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

ՄՈՍԿՎԱ

Ձերդ Սրբություն.

Համայն քրիստոնեական աշխարհը ավետում է.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՜Ի Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Հարության հրաշափառ դեպքի խաղցությունը վայելելու համար, ամեն մի քրիստոնյա պարտի իր զգացմունքները մաքրել, որպեսզի տեսնի Քրիստոսի հարության հրաշալի լույսը:

Քրիստոսի հարությունը ուրախության զգացմունքով է լցնում մեր ամբողջ էությունը, մեր միտքն ու սիրտը:

Հարուցյալ Քրիստոսը Իր առատ գանձարանից, Իր մեծ ողորմությամբ կոչ է անում բոլորին քրիստոնեական եղբայրության և միության:

Այն ժամանակ ամբողջ աշխարհում կթագավորի իսկական, ճշմարիտ խաղաղությունը:

«ԱՐԴԱՐԵՒ ՅԱՐԵԱՒ ՔՐԻՍՏՈՍ»:

Եղբայրական աղոթքներով ցանկանում եմ Ձեզ և Ձեր սուրբ, աստվածապան հոտին՝ հաստատ հավատ, խաղաղություն, հանգիստ և բարորություն:

ԵՓՐԵՄ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ

ԹԲԻԼԻՍԻ

Զերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՀ»:

Երբ տոնում ենք մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ հարության տոնը, ամենուրեք քրիստոնյաների համար հարության հին ավետիքը միշտ էլ մնում է նոր: Խափուր գերեզմանից հրեշտակի պատգամը հաստատում է մեր Փրկչի հաղթական մեծ իրականությունը խավարի ուժերի վրա, միաժամանակ մարդու վերջնական հաշտությունը Աստուծո հետ, որի համար Հայրն ուղարկեց Իր Որդուն աշխարհ. «Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի Իւր յաշխարհ, թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ»:

Նրանց համար, որոնք Քրիստոսինն են, այս ավետիսը գրավականն է ինչ հա ասաց. «Ես եմ յարութիւն և կեանք», և որ «նորոգեաց զամենայն»: Քրիստոնյա ժողովուրդը, Նրա Ս. Եկեղեցու անդամակցությամբ, վերածնվում է Նրա հարուցյալ կյանքի նորոգությամբ: Ինչպես երանելի Պողոս առաքյալն է հիշեցնում եփեսացիներին՝ «Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ», այնպես էլ մենք ստանում ենք Նրա շնորհքը և զորությունը՝ հաղթելու Իր մարմնին մեր անդամակցությամբ, որ է Եկեղեցին:

Շուտով ես կհրաժարվեմ Քենտրբերիի Աթոռից, դրանով իսկ կդադարեմ Զերդ Սրբության հետ թղթակցելու պատեհությունից, «բոլոր եկեղեցիների հոգատարության հարցում, բայց Դուք կլինեք միշտ իմ խոհերի և աղոթքների մեջ:

Հետաքրքիր ակնարկ գցելով այն օրերին, երբ ես բարձրացա Քենտրբերիի Ս. Օգոստինոսի Աթոռի վրա, իրապես համոզված եմ, որ մեր օրերում մենք տեսանք քրիստոնեական կյանքի նշանակալից վերազարթնումը՝ եկեղեցիների միջև և այդու իսկ հոգեկան միության անը՝ քրիստոնեական հայտնության մեծ նշմարտության մեջ, որոնք հասարակաց են մեզ բոլորիս:

Զերդ Սրբությունը թող վստահ լինի, որ ես կշարունակեմ աղոթել Ձեզ, Ձեր հավատավոր հոգևորականության և ժողովրդի համար: Թո՛ղ Տերը նշմարտության կատարյալ միությունը շնորհի Իր բոլոր ծառաներին, որոնց համար մեր օրհնյալ Տեր Հիսուս Քրիստոսը այնքան եռանդագին աղոթում էր Իր երկնավոր Հորը:

Եղբայրական սիրով և ողջույններով, Ձեզ եղբայր ի Քրիստոս՝

ՋԵՈՖՖՐԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ԼՈՆԴՈՆ

Զերդ Սրբություն.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵ՞ԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Անձամբ իմ և Սրբազան Սինոդի անունից եղբայրաբար շնորհավորում եմ Քրիստոսի լուսապայծառ հարության տոնը, որը միաժամանակ քրիստոնեական աշխարհի հույսի տոնն է:

Մեծ է, սուրբ և հրաշափառ Տիրոջ հարությունը: Հրճվենք և ուրախանանք, որովհետև Աստված բացում է Իր ողորմության դռները, մոտեցնում է մեզ Իրեն Իր ողորմությամբ և լիացնում սիրով, որպեսզի արժանի լինենք հարության բարի պարգևներին, հոգեպես ամրանանք մեր փրկության հանապարհի վրա:

Լիանանք հարության լույսով և ուրախությամբ փառաբանենք ամենակարող Աստուծո անունը:

Ճշմարիտ է հարությունը, որը հիմնաքարն է մեր հավատի և որը մեր սրտերում փայլատակում է հավերժական լույսով և մեզ միտ պարգևում հասկանալու Ավետարանը Քրիստոսի փրկարար, խավիչ հաղթանակով:

Քրիստոսի հարության փառապանծ տոնի առթիվ, ջերմեռանդությամբ աղոթում ենք կյանքի Իշխանին, որ օրհնի Իր ողորմությամբ և սիրով Զերդ

Սրբությանը, Ձեր միաբանությանը, հավատացյալ ժողովրդին և համայն մարդկությանը տա խաղաղություն և բարեհաճություն:

Թող բերկրանիք լինի Քրիստոսի հարությունը:

Մեզ հանձնում ենք Ձեր սուրբ աղոթքներին և մնում Ձերդ Սրբության խոնարհ եղբայր ի Տեր՝

ԿԻՐԻԼ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

ՍՈՖԻԱ

Վեհափառ Տեր.

Խորին երախտագիտությամբ և բերկրալիր սրտով ստացանք Ձերդ Վեհափառ Տերության 20 մարտ թվակիր թանկագին ավետաբերը Հիսուսի Ս. Հարության Ձեր սրտեռանդ մաղթանքներով և օրհնությամբ համօրեն աստվածապահ ուխտիս և ինձի ուղղված:

Մենք ալ, Վեհափառ Տեր, նույնքան սիրով և հրճվանքով կպատասխանենք Ձեզի. «ՍՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ», և կխնդրենք, որ հանիր ընդունիլ մեր ամենաջերմ և անկեղծ մաղթանքները: Թող հարուցյալ պաշտելի մեր Փրկիչը Իր անգին արյունին զոհաբերությամբ նորանոր շնորհաց և օրհնության ու հաջողության շրջան մը բանա Ձերդ Վեհափառության և համօրեն հայ ժողովրդյան մեր Հայրենի հողին վրա և ի սփյուռս աշխարհի. թող ծաղկին Ձեր և մեր լավագույն հույսերն և ակնկալությունները խաղաղության և բարության մեջ:

Այս ջերմ մաղթանքներով և լավագույն զգացումներով կմնամ Վեհափառ Տերությանդ ամենախոնարհ ծառա՝

Հ. ՍՐԱՊԻՈՆ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Վեհափառ Տեր.

Զվարճացյալք մեծավ ուրախությամբ մերձակա տոնիվ Ս. Հարության Փրկչին, կփութամ շնորհավորել Ս. Ձատիկը, մաղթելով արևշատություն և Ձեր հոգեվեր ջանքերուն ատոք հունձք մը:

Մանավանդ խաչին մեզ փրկություն, հաղթական հարությամբ մեզ բերկրություն և հույս՝ Քրիստոս կենդանին հավիտենից:

Օրհնյալ է հարությունն Քրիստոսի:

Աղոթակից՝
Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈՉԵԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՎԻԵՆՆԱ

Ձերդ Սրբություն.

Հանուն եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարության, Ս. Ձատկի առթիվ հղում եմ Ձեզ մեր հատուկ, ջերմ շնորհավորանքները:

Աղոթում ենք վերանորոգված հույսով, Ձեր և Ձեր եկեղեցու վրա Աստուծո մնայուն օրհնության համար: Թող Տերը զորացնի մեր հարուցյալ Տիրոջ և Փրկչի վկայությունը աշխարհի բոլոր քրիստոնյա եկեղեցիների առաջ:

Մնամ հարգանքով՝
Վ. Ա. ՎԻՍՍԵՐՏ ԴԸ ՀՈՒՖՏ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԺԸՆԵՎ